ՍԻՕՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ
ՃԼՅԱՆ ՄԻԱՄՍԵԱՑ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1867



ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 6.

ՍԻՈՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՅՈՒՆԻՍ 30.
1867.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՐԱԳԻՏԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿ ԳԵՐ. ԻՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի ՃԻՏՏԷԷ

ԻՆՉՊԷՍ նախորդ թուով ըսած էինք ապրիլ ամսոյ 27 ին Գեր. Իսահակ Արքեպիսկոպոսի Սուէզէն մեկնիլը. երկրորդ նամակաւ իւրով գրեալ ի 23 մայիսի, կ'իմացընէ՝ սոյն ամսոյն 3 ին վեց աւուր մէջ ի Ճիտտէ հասնելնին. Հոն կը գտնեն բաղդաւորն քանի մի ազգայինք, որոց մին է Մալէզեան մեծարգոյ բժիշկ Յրանկլեան էֆէնտին, որ Բ. Դրան կողմէն կարգուած բժշկական մասնաժողովի անդամ է հոն, և իւր պատուաւոր դիրքը պատճառաւ շատ մարդասիրութիւն ցոյց կուտայ Գեր. Արքեպիսկոպոսին և իւր ընկերացը։ Երկրորդն է գաղատացի Յովսէփեան Պօղը (Պօղոս), որ Անգղիոյ հիւպատոսարանին թարգման ըլլալով, ազգասիրաբար յարգ և պատիւ ցոյց տալէն ի զատ, Ճիտտէի Նղեշլին և Գոյմագամին կողմէն ևս յանձնարարական թըղթեր գրել կուտայ, նոյնպէս և Անգղիական հիւպատոսին կողմէն առ Գոյմագամն Սեւագինի քաղաքին։ Այս քաղաքս Ճիտտէի հանդիպակաց կողմը բուն Հապէշու երկրին վերայ ուրիշ ծովահայեաց քաղաք մի է. և ինչպէս կը գրէ Գեր. Նամակագիրը, Մուսավայի վերայօք երթալը քիչ մի վտանգաւոր ըլլալուն, ուր տեղ շատ լրտեսներ ունի եղեր Թէոդոր Թագաւորը,

խոհեմութիւն ստացած են Պաւելայի վերայօք ցամաքաւ երթալու. և մայիս ամսոյ 23 ին կը մեկնին Ղիլատէէն դէպ ի Մեսաւաքին: Այն նամակէն կ'իմացուի յայտնապէս, որ սուտ տեղեկութիւն էր ոմանց ազգային լրագրաց հաղորդած լուրը՝, որոնք անգղիական լրագրէ մի առնելով Գեր. Խասհակ Արքեպիսկոպոսին ի Հապէշստան հասնիլը կ'իմացընէին:

Այն առթիւ արժան կը համարիմք յայտնել սիրելի ազգիս՝ Անգղիոյ արտաքին գործոց պաշտօնէին առ տեղւոյս հիւպատոսարանը գրած նամակաւ յայտնած իւր շնորհակալութիւնը, յորում կ'ըսէ.

«Յայտնեցէք Պատրիարքին այն վսեմ գաղափարը՝ զոր Բրիտանական Վեհափառութեան կառավարութիւնը ունեցաւ Ն. Բարձրապատուութեան անյապաղ ի գործ դրած բարեկամական եղանակին վերայ՝ ի մասին կարգադրութեան յազատութիւն անգղիացի բանտարկելոց ի Հապէշստան»:

(Exprimez au Patriarche la haute idée, que le Gouvernement de sa Majesté Britannique, a de la prompte et amicale manière d'agir, que son Eminence a deployée dans les arrangements pris pour procurer la liberté des prisonniers Anglais en Abyssinie.)

Այս խօսքով կ'ուզէ ակնարկել Ամենապատիւ Արքազան Պատրիարքին՝ բաց ի նամակներէն իւր Փոխանորդը անձամբ ուղարկելուն ի Հապէշստան:

Այն նուիրակութեան նպատակին յաջողութեանը համար կը պարտաւորի սուրբ Աթոռոյս միաբանութիւնը, և թերեւս անոր հետ ի միասին բոլոր ազգն Հայոց, կրկնապատկել իրենց աղօթքն ու աղաչանքը առ բարձրեալն Աստուած՝ այցելուն հոգւոց մարդկան, որպէս զի հաճեսցի ընդունել բախնդակ ազգի մի աղերսը, և շնորհէ ազատութիւն թէ անգղիացի հիւպատոսին և թէ նոյն ազգութեան բանտերուն մէջ գտնուած ուրիշ եւրոպացի կալեալոց. ու շնորհէ միանգամայն հրեշտակի բարւոյ առաջնորդութիւ հասցընել զնուիրակութիւնս մեր ի նպատակ տեղին առանց վտանգի. ինչպէս և Գեր. Խասհակ Արքեպիսկոպոսն և իւր ընկերքը թախանձաքար կը խնդրեն բոլոր միաբանութենէս իրենց ջերմ աղօթից օժանդակութիւնը. «Վասն զի, կ'ըսէ իւր նամակին մէջ, ունիմք յառաջիկ ի ներքսագոյն երկիրն մտանել ընդ ճանապարհ տաժանելի և վտանգալից»:

Օքսֆորտի մահտեսի Յովակիմ քահանային:

Նախորդ ամսոյ յաւելուածին մէջ Օքսֆորտի երեք իշխանաց՝ Ամեն. Տ. տայի Արքազան Պատրիարք Հօր կողմէն խրկուած մահտեսի պարոն Յովակիմի ձեռօք կրկին իրենց մայրենի եկեղեցւոյ ծոցը դառնալնին պատմելնէս յետոյ՝ խոստացած էինք այս վերջնոյս ուրիշ մէկ քաջութիւնն ալ պատմելու. քաջութիւն մի՛ որոյ մէջ կը փայլի մահտեսի պարոն Յովակիմի թէ քրիստոնէական և թէ ազգային զգացմանց մեծութիւնը, որոյ օրինակները խիստ քիչ անգամ տեսնուած են վերջին ժամանակներս:

Պարոն Յովակիմի բուն արհեստը վաճառականութիւն ըլլալով, այս նպատակաւ յաճախ կ'երթեւեկէ Օքսթունէն ի Լոնդոն, երկաթ տանելով հոն, և ծախելի և ուրիշ ապրանաց հետ փոխանակելով կրկին իր երկիրը դառնալ: Վերջին անգամուն, այսինքն 1866 ամին ձմրան մէջ Լոնդոն գտնուած ժամանակ հետագայ դէպքը կը պատահի հոն:

Լեօֆ Լփենաի անուամբ մահմետականի մի որդին երկու տարիէն ի

մէր սիրահարած ըլլալով Սէլիմէի օղլու Եսաուի անուն պատուաւոր Հայու աղջկանը, շատ կ'աշխատի եղեր անոր սիրտը գրաւելու զանազան խոստմունքներով։ Էննիկ, այս է Եսաուի այդ աղջկան անունը, 25 տարեկան մանկամարդ և քանի մի նորահաս զաւակաց մէր, իւր հօրն ու էրկանը պատուոյն նախանձաւոր, ամենեւին տեղիք և հաճութիւն չտալով անօրէն առաջարկութեան մի, միշտ կը մերժէ զայն խոհական խօսքերով։ Վէօֆ Էֆէնտիին որդին իւր սիրահարութեան առարկայ եղողին սիրտը տարապայման համոզմունքներով շահելէ յուսահատելով՝ միտքը կը դնէ առեւանգել զայն բռնութեամբ, և կը սպասէ պատեհ առթի մի։ Ուստի անցեալ տարի 1866 յունուար ամսոյ վերջերը երբ կ'իմանայ սիրահարը Էննիկին բաղնիք գնացած ըլլալը, 25—30 հոգիէ աղաքներով նորա ճամբան կը սպասէ, և դուրս ելած ժամանակ յանկարծ վրան կը թափին ու յափշտակելով կ'առնուն կը տանին Սէլահ Էֆէնտւոյն տունը, իբր տեղի ապահով և անվտանգ. վասն զի յիշեալ Էֆէնտին քաղաքին երեւելիներէն եւ մեծ ազդեցութեան տէր մարդ է։

Էննիկ տեսնելով զինքը բռնութեան ալս եղած, առանց կորսնցնելու իւր մտաց արիութիւնը, պատիւն ու անունը անարատ պահելու համար՝ զինքը առեւանգողին կամայն մանաւանդ թէ կրկը առ երեսս հաճութիւն ցըցունելով, կ'առաջարկէ որ երեք ամիս իրեն պայմանաժամ տայ՝ օրինաւոր ամուսնութեան մի զինքը պատրաստելու ըստ օրինի տաճկաց։ Իւր խնդիրը կ'ընդունուի. և այս խելացի ճարտարութեամբ Էննիկ իւր համեստութեան քողը չկորսնցըներ։

Առեւանգութենէն քանի մի օր յետոյ իւր ծնողքը և ընտանիքները շատ հետաքրքրութիւններէ ետքը կ'իմանան նորա Սէլահ Էֆէնտիին տունը փակուած ըլլալը, և կառավարութեան դուռը նեղթալով կը բողոքեն եղած բռնութեան դէմ, և յափշտակուած կինը կը պահանջեն։ Կառավարութիւնը բերել կուտայ զանիկայ Սէլահ Էֆէնտւոյն տունէն, և ժողովքի մէջ քննութիւններ ըլլալով՝ կը հարցընեն կնկան կառավարութեան կողմէն, թէ դու Իսլամութիւնը ընդունե՞ր ես, և հիմայ որ քեզ կը պահանջեն՝ ինչ է քու միտքդ. Կը պատասխանէ կինը՝ թէ ես Իսլամութիւնը յանձն առած չեմ. կրօնքով Քրիստոնեայ՝ ու ազգաւ Հայ եմ, բայց բռնութեան զոհուած. եթէ ազատ ըլլամ՝ իմ կրօնքս պիտի պաշտեմ։ Ասոր վրայ կառավարութիւնը ստորին բարկանալով և սպառնալիքներ ընելով, և կինը Իսլամութեան խօսք տուած ու Իսլամուհի է ըսելով կրկին Սէլահ Էֆէնտւոյն տունը տանիլ կուտայ։ Այս օրինակ վճիռ և այս կերպ դատաստան մի բոլորովին յուսահատեցընելով Էննիկի ծնողքն ու ընտանիքը, վերջնին ծուելով ետ կը դառնան ու կը լռեն։

Սակայն Էննիկի ազատութեանը վերայ խորհողներ պակաս չէին, և այս ազատութիւնը Զէյթունցի մահտեսի Յովակիմի ձեռօք միայն կրնայ կատարուիլ կ'ըսէին։ Ուստի երբ առաջարկեցին իրեն, պարոն Յովակիմ քանի մի դժուարութիւններ և անկարելիութիւններ մէջ բերաւ. որոնց մէկն էր իր անձին և անձնական շահուն կորուստեան վտանգը. վասն զի իւր ապրանքները դեռ չէր ծախած, որ 50.000 ղուրուշի մօտ արժողութիւն ունէին, պէտք էր զանոնք զոհել և մէկ մ'այ Զանգէտ չկրնալ գալը աչքն առնել. որով՝ թէ եւ իւր անձին մահուան վը-

տանց ալ չզգաստանի, իւր առեւտրական յաջողութիւնները սիրտ գաղջին քաղաքին հետ, որ իրեն մեծ կարեւորըսել է ։ Հանդէպը Երեւելի ալեւոյինք կը խոստանան նորա շահերուն հսկել եւ բնաւ տեղի մի վնաս չզուցնել, եւ ապրանքին գինն ալ հատուցանել ։ Այս վերայ Տիւման օգուտ հանգուցելով, կրծքին եւ աղքին սէրը իւր սրտին մէջ կրկին վառելով՝ կը նետէ զինքը վաճառքին մէջ ։

Մելան Էֆէնտուոյն պատկից եռափըծը Մանուկի առնեն ըլլալով, մահտեսի պարոն Յովակիմ կ'երթայ նորա տունը եւ տեղւոյ մի աղջկան հետ խօսակցելով եւ նորա կոկին իւր երկանը քով դառնալուն համար ունեցած փափաքին իմանալէն յետոյ՝ կը խոստանայ իրեն Յովակիմ, որ զինքը կարող է ազատել քունութեան ձեռքէն ։ Բայց իրարու հաւատարմութեանը վերայ չհամարձակելով ապահով ըլլալ, իւր երաշխաւորութիւն Յովակիմ նորա իւր ծոցի ժամացոյցը կը խրկէ եւ Աննիկ իւր վզէն ակն չղթան հանելով կու տայ անոր ։

Տիւման օղլու իւր պատրաստութիւնը տեսած էր . քանի մի մեծկակ բեւեռներ առնելով հետը՝ գիշերը ժամը 6 ին, ինչպէս որ որոշած էին, հետը ուրիշ երկաթագործ մի առած, կ'երթայ Մելան Էֆէնտուոյն տանը կողմը . գամերը կարգաւ պատին վերայ զգուշութեամբ գամելէն յետոյ՝ զանոնք բռնելով կ'ելնէ վեր ու կ'իջնայ բակին մէջ, ուր տեղ գիշերային լռութիւնը կը տիրէր ։ Աննիկը՝ որ ի պատրաստի կը կայծուէր հոն, չէր երեւար ։ Պարոն Յովակիմ պահ մի շուարած կը մտածէ, եւ յետոյ զինքը սրտապնդելով՝ կ'երթայ սենեկի մի դուռը, ուր տեղ կը կարծէր որ ըլլայ Աննիկ, մատի հարուած մի կու տայ . ձայն չկայ . կը կրկնէ եւ պզտիկ մի աւելի սաստիկ տալով՝ հապալու ձայն մի կը լսուի ։ Պարոն Յովակիմ սանդուխը կարծելով՝ կը փախչի տեղ մի կը պահուըտի . Աննիկ դուրս ելնելով՝ կը յայտնէ Յովակիմ զինքը անոր եւ կը փութացնէ զնա ի փախուստ ։ Աննիկի բոլոր անդամները սաստիկ ջերմէ բռնուածի պէս կը դողային ։ Նոյն պահէն զինքը վար իջեցընել դրեթէ գերեզմանի մէջ նետել ըսել էր ։ Տանը դուռն ալ այն օրերը երեք տեղաց կղպանքով փակեր էին, բայց բանալիները Աննիկ իւր քովը պահած էր . առաջին բանալին դարձընելուն սաստիկ կուիչ մի կը հանէ, որու արձագանգը կրնար տանը չորս կողմը տարածուիլ ։ Յովակիմ ու Աննիկ սըրտադող եղած վրանու հասա վերարկուն կղպանքին վերայ դնելով ու դըրեթէ ձայները խղդելով մի՛ կը կարողանան երեք կղպանքն ալ դարձընել, եւ ահա դռները բացուեցան իրենց առջեւ ։ Այս յանդուգն արիութիւն եւ աներկիւղութիւն բաւական չեղաւ իւրեան պարոն Յովակիմ, այլ Աննիկին ունեցած դոյքն ալ ուզեց ազատել . մըտաւ սենեակը, ու հոն պառկող մարդոց վերայէն անցնելով պահարանին մէջէն երկու ծրար կ'առնու ու կ'ելնէ դուրս, առանց եւ ոչ մէկը իմանալու, որ կարծես թէ Մորփէոս ի շընորհս քրիստոնէութեան անոնց վերայ քաղցր ու խորին թմրութիւն մի տարածելով՝ Աննիկի փախուստը կ'ապահովէր ։ Աննիկ իւր դողդոջուն բազուկը Յովակիմին ուսին կռթնցնելով եւ քով կարի արագելով իրենց երկչոտ քայլերը, անծանօթ բարեկամի մի տուն կը տանի զինքը Յովակիմ, ու հոն կը հանգստացընէ ։ Յաղթութիւնը կէս մի կը լրանայ ։

Հետեւեալ օրը Լէօֆ Էֆէնտուոյն տանը մէջ խարանցում մի կը փրթի, եւ դրեթէ քաղաքն բոլոր կը յուզուի ։

կառավարութե՛ կողմէն հետազօտու-
թեան կ'ելնեն , հոն Իսլամութեան
ջերմ աշակերտներէն մէկը կ'իմացնէ՝
թէ այս յանդգնութեան ու չափա-
զանց անիրաւութեան գործքին հե-
ղինակ Զէյթունցի Յովակիմէն ի զատ
մէկը չկրնար ըլլալ։ Եւ թէպէտ Յո-
վակիմը ձեռք ձգելով ու բանտար-
կելով շատ կը ստիպեն զինքը որ ճըշ-
մարտութիւնը յայտնէ , բայց նա ա-
մենևին այսպիսի կրօնափոխութեան
մասնաւանդ թէ արդարութեան գոր-
ծոյ մի հեղինակ ըլլալը չյայտնելով , և
ազգային գլխաւորաց միջնորդութիւն
ալ լսելի ըլլալով՝ բանտէն կ'ազատի , և
քանի մի օր ետքը փետրուարի 10 ին
(1866) կ'առնու զԱննիկը հետը ու
կ'ելնէ քաղաքէն դուրս։ Երկրորդ օրը
իմացուելով նոյն փախուստը , երկու
զինեալ մարդիկ ետևէնուն կը խրկուին՝
որ զՅովակիմն սպաննեն և Նաուր ա-
ջոյի խեղճ աղջիկը ետ դարձընեն։

Զէյթունցի նոր դիւցազունը ար-
դէն Պաղարճըք հասած էր՝ (որ հան-
դէպէն 13 ժամ հեռի է ,) երբ տեսաւ
իր ետևէն ինկնող երկու զինեալ մար-
դիկը , որոնց հետ քաւական կռուե-
լով՝ զերկուքն ալ քիչ շատ կը վիրա-
ւորէ . և երկրորդ անգամ Մարաշու
մօտ ալ հետևողին գրեթէ մեռնտոր-
տելով , իր ալ ողջ անվնաս Մարաշու
մէջ կը մտնէ ։ Հոն քանի մի օր հան-
գըստանալէն յետոյ կ'առնու կը տանի
զինքը ի Զէյթուն , ուր կը մնան ութ
ամսոյ չափ . հոն կուգան նաև երկին
ու ազգականքը և զինքը գտնելով և
Յովակիմի ազգասիրութիւնն ու անձ-
նանուիրութիւնը գովելով կ'ուրախա-
նան ։ Բայց կատարեալ յաղթութիւ-
նը դեռ չէր լրացած . երկրորդ փորձէ
մի մէջ է որ անցնէր պարոն Յովա-
կիմի քաջագործութիւնը ։

Այն միջոցները Հալէպու Վալի․
Ճէվտէթ փաշային Հանդէպ գանգատե-
լով , և այն անցքը պարագայիւք իմա-
ցնելով , լուր կը խրկէ պարոն Յովակի-
մին՝ որ իր փախուցած կինը առնու
և աներկիւղ Հանդէպ գայ առանց մէ-
կէ մի կասկածելու ։ Վստահելով Տիւ-
մին օղլու Վալի․ Փաշային ազատա-
մտութեանը վերայ , կ'առնէ զԱննիկը
և իր ընտանեաց գլուխը կը յանձնէ ։
Քաղաքի մահմետական հասարակու-
թիւնը իմանալով՝ ամենքը մէկէն ոտք
կ'ելնեն և զկինը կը պահանջեն Իսլա-
մուհի մ'է ըսելով։ Վալի․ Փաշային
մօտալուտ խռովութենէ վախնալով՝
որ կրնար , ինչպէս շատ անգամ պա-
տահած է , աղետալի հետևութիւն-
ներ ունենալ , կինը ու պարոն Յովա-
կիմը իր ներկայութեան կանչել կու
տայ , ժողովք կը գումարէ , և ժողովոյն
մէջ պարոն Յովակիմին շատ սպառնա-
լիքներ ընելով՝ կը հարցընէ կնկան՝ թէ
« Դու Իսլամութիւնը ընդունելէն յետոյ
ինչու՞ կրկին քու կրօնքիդ դառնալով
այսչափ յուզմանց պատճառ եղար . և
թէ՝ հիմայ դու Իսլամուհի՞ մ'ես , թէ
Քրիստոնեայ » ։ Կը պատասխանէ Ան-
նիկ քաջասրտութեամբ . « Երկիւղէն զիս
ակամայ Իսլամ ըրած էր , բայց հիմայ
Հայ եմ և Հայ կ'ուզեմ մնալ . և այս
պատճառաւ ստիպեցի զՅովակիմը որ
զիս առնու փախցընէ » ։ Ճէվտէթ փա-
շային իր ազատամտութիւնը և իր
արդարասէր ալէրութե՛ կամքը ի գործ
դնելով՝ հրաման կ'ընէ որ զԱննիկ իր
ընտանեացը յանձնեն , և զՅովակիմ
ազատ թողուն ։

Սուրբ Յակոբայ առաքելական Աթոռոյն սեփականութեան խնդիրը.

Երուսաղէմ մի իւրաքանչիւր քրիստո-
նեայ ազգ իրենէ անուն միշտ սեփակա-
նութեան յատուկ կրամ ունք մի ունե-

նաւ կը պնդեն սուրբ Տեղեաց վերայ, և կ'աշխատին ալ, եթէ կարելի է, հասարակաց եղած տեղէ մի միւս ազգերը հեռացընել և ինքնագլուխ տիրել անոնց. և շատ անգամ կարողացած ալ են յաջողցընել իրենց ջանքը՝ երբ առիթ մի ունեցեր են սառաջակայ եղող անձանց սիրտը գրաւելով: Սուրբ տեղիքներէ և եկեղեցիներէ ի զատ ամեն ազգ, ինչպէս յայտնի է, իրենց սեփական վանքեր ալ ունին. և ասոնք ժամանակ առ ժամանակ միւս հասարակութեանց նախանձուն առարկայ եղած են, որոնք ամեն ջանք ի գործ դրած են զանոնք խլել հին ժամանակէ ի վեր իրաւունք ունենալնին պնդելով:

Այս կարգէն է սուրբ Յակոբայ վանքը, որ քրիստոնէութեան սկիզբէն ի վեր բուն Հայոց ստացուածքն եղած է: Յոյնք քանի մի անգամ սիրտ գրաւելով ջանացին լուբացընել զայն. դատեր բացին, և եղաւ ժամանակ որ միջոց մի ձեռքերնին ալ մնաց. բայց միշտ ճշմարտութիւնը յաղթելով անոնց ձեռքը գտնուած թղթերուն սուտ ու կեղծ ըլլալը կը յայտնէր: Յոյնք կը պնդէին նաև թէ սուրբ Յակոբայ վանքը Օմար Խալթթայի օրէն իրենց ստացուածք եղած է, և այն Խալիֆային հրովարտակ մի ևս կը ցուցնէին, որոյ կեղծ ըլլալը 1810ին եղած դատարուն ժամանակը յայտնուեցաւ: Կ'ըսէին նաև թէ յիշեալ վանքը նախ Վրաց ըլլալով, և ասոնք 1660ին միջոցները Երուսաղէմէն անհետանալնէն յետոյ՝ անոնց բոլոր վանքերը իրենց ձեռքն անցաւ:

Նոյնը կը պնդեն նաև Լատինք իրենց կողմէն, ըսելով թէ Սպանիոյ Յակոբ Բ. թագաւորը մեր Օշին թագաւորէն Թէկղի կուսին մասունքները խնդրելով և ընդունելով, նա ալ իբր փոխարէն սուրբ Յակոբայ վանքը շնորհած է Հայոց՝ ի խնդրոյ Օշինի 1318ին:

Պարոն Կուրմանի Լիխորնացի, որ Երուսաղէմի Պաղղիոյ Թղթատան տեսուչն էր մինչև անցեալ տարի, Լատինաց այն սխալ կարծիքը ցուցընելու համար յատկապէս աշխատած է պատմական ապացոյցներով ի լոյս ընծայել համառօտ տետրակ մի. զոր և մեզ հաղորդելով՝ արժան համարեցինք Սիոնի միջոցաւ հրատարակելու, ոչ թէ մեր ազգին այդ օտար ապացոյց ցուցընելու համար թէ ամենուն սուրբ Յակոբայ վանքը ո՛չ Յունաց և ոչ Լատինաց սեփական ստացուածք եղած է: Եւ որովհետև այս սխալ կարծիքը ընդհանրացած է բոլոր Եւրոպացւոց մէջ, Պարոն Կուրմանի կ'աշխատի ցուցնել թէ յիշեալ վանքը 1318 թուականէն առաջ ալ Հայոց ձեռքն էր: Կը յուսամք որ այն յօդուածը օգուտ պիտի ընէ Լատինաց իրենց կարծեցեալ իրաւանց անհեթեթ ըլլալը ցուցնելով: Հոս հարկաւոր կը համարիմք ըսել նաև, թէ Պարոն Կուրմանի այսչափ աշխատութիւն ալ յանձն չէր առնուր ապացուցի համար, եթէ քիչ մի հայերէն լեզուին ծանօթ ըլլալով, աչքէ անցընէր անգամ մի այն ձեռագիրները, որոնք 1318 թուէն առաջ սուրբ Յակոբայ վանքին մէջ օրինակուած են: Պիտի զարմանար դարձեալ, թէ որ կարդալու ըլլար Օմար Խալթթայի հրովարտակը, որով յիշեալ Մար Եագուպ վանքը կրկին կը շնորհէ Հայոց Ուրֆացի Եղեկիելեան Գրիգոր Պատրիարքին, Հիճրէթի 15 թուականին, (637) որ ըսել է Սպանիոյ թագաւորին մեր Օշին արքային պարգեւելէն 681 տարի առաջ:

Օմարայ հրովարտակը, ինչպէս և Ալիին շնորհածը, որոնք սուրբ Աթոռոյս Պատրիարքական դիւանատան մէջ

կը գտնուին, կրնան թէ Յունաց և թէ Լատինաց պատրաստել առանց հակառակութեան, թէ յիշեալ վանքը սեփական ստացուածք մի եղած է միշտ Հայոց, իբր միակ պատսպարան իրենց միաբանից։

QUESTION SUR LA PROPRIÉTÉ DU COUVENT ARMENIEN DE St JACQUES

Toutes les communautés chrétiennes de Jérusalem prétendent avoir des droits particuliers sur les Lieux saints, depuis les temps les plus reculés. Elles s' efforcent de se priver les uns les autres du droit de possession commune pour les posséder sans partage, et ont le plus souvent réussi dans leur but, quand elles trouvèrent les moyens de captiver le coeur des hommes de Justice.

Outre les sanctuaires et les églises communes, toutes les communautés ont, comme on sait, des couvents qui leur appartiennent exclusivement. On a vu de temps à autre ces biens devenir le sujet d' envie de celles des communautés, qui n' en jouissent pas, et qu' ont fait tout pour destituer le légitime propriétaire en prétendant des droits anciens, qu' elles s' efforçaient de faire paraître.

De cette catégorie est la propriété de St Jacques le Mineur, laquelle, dès le commencement de la chrêtienté, a toujours été une possession exclusive des Arméniens proprement dits.

Les Grecs ont eu plusieurs fois l' occasion de gagner le coeur des gens de justice; ils plaidaient donc, et parvenaient à la possession; mais la vérité ne tardait pas à se mettre à jour leur document, et tous les papiers étant faux, ils n' eurent d' autre résultat que la honte. Ceux-ci prétendent encore avoir possédé le Couvent de St Jacques dans le septième siécle, sous le règne d' Omar iben-el-Khattab, en s' appuyant sur le firman de ce Calife, qu' ils disent avoir reçu, et dont la fausseté a été révélé dans le dernier procès, en 1810. Ils disent aussi, que le Couvent appartenant aux Georgiens, ceux-ci ayant été expulsé en 1660, de la terre sainte, leurs biens ont été entièrement passés entre leurs mains.

Les Latins ont cette même prétention, de plus ils croient, que ce bien leur appartenait autrefois, et que Ochyn roi Arménien de Cilicie l' avait demandé, et obtenu de Jacques II roi d' Aragon en échange des reliques de la Sainte Thècle en 1318.

Le jeun sieur Carlo Gurmani, natif de Livourne, et auteur d' une brochure remarquable intitulée Braire d' un Ane, prit la peine de démontrer l' absurdité de cette prétention des Latins. A l' appuie de preuves historiques il prouve, que le dit Couvent de St Jacques, n' a jamais été propriété latine; et que, par conséquent, il appartenait aux Arméniens l' année 1318. Ce petit travail, qu' il a bien voulu nous communiquer, mérite d' etre cité dans notre SION.

Nous sommes persuadés, qu' il servira à faire connaître aux Latins l' absurdité de leur prétention sur la propriété dudit Couvent. Nous croyons cependant nécessaire d' ajouter ici, que, le sieur Carlo Gurmani n' a pas eu recours à d' autres faits, qui sont beaucoup plus saisissants pour affirmer ses preuves, ne connaissant pas la langue arménienne et n' ayant pas lû les divers manuscrits, qui ont été écrits dans le Couvent de St Jacques avant l' année 1318. Il serait aussi bien surpris, s' il avait lû le firman d' Omar iben-el-Khattab, le quel accorde en toute propriété au Patriarche arménien Grégoire d' Etesse, dans le quinzième année de l' Hygerète (637 de l' ère chrêtienne), le Couvent de Mar-Yacoub (de St Jacques), six cent quatre-vingt-un ans avant que le roi Ochyn l' ait reçu en échange de Jacques II roi d' Aragon.

Le firman d' Omar et celui de Calife Ali, qui se trouvent dans les Archives patriarcales du Couvent arménien, et qui peuvent servir à persuader les Latins et les Grecs, démontrent sans contredit, que ce bien a toujours appartenu aux Arméniens comme unique asile de leurs religieux.

ԵՂԻՑԻ ԼՈՅՍ

Հայ կաթոլիկաց Վարք սրբոցը՝ սրբուհւոյն Թէկղի վարուցը վերայ խօսելով, կ'ըսէ՝ թէ յիշեալ կուսին մասունքը 1318 թուականին Արագոնից Յակոբ Բ. թագաւորը Հայոց Օշին արքայէն խնդրելով՝ որուքով կը գտնուէին անոնք, և առատ հանդերձ նշանաւոր ընծաներ ևս խրկելով՝ Օշին արքան որ խնդրանքը շնորհեց, այսու ամենայնիւ՝ իրեն ալ անոր խրկած ընծայից փոխարէն՝ զոր չուզեց ընդունել, իւր կրօնաւորաց համար Երուսաղէմի սուրբ Յակոբայ վանքը

Frat Lux!....

Le martyrologe, Arménien Catholique, en nous donnant l' histoire de Sainte Thècle, la vierge d' Isaurie, convertie par Saint Paul, nous dit que les reliques de la Sainte furent demandées en 1318 par Jacques II, roi d' Aragon, au roi d' Arménie Ochyn, qui les possédait et auqel il envoya des présents considérables; mais qui Ochyn, tout en concédant les reliques, demanda à son tour au roi d' Aragon, au lieu des présents, qu' il refusait, la

խնդրեց․ որ այն ժամանակ Սպանիացւոց ձեռքն էր, և 1321ին ստացաւ զայն (1)։

1187ին՝ Սալահէտտին Եգիպտոսի Էյուպեան ցեղին առաջին սուլթանը Երուսաղէմի տիրելով՝ խաչակիրները և լատին կարգաւորները դուրս կ'ընէ անկէ, որոնք թէ Կոտըֆրէ Պույյէոնի տիրելէն ետքը և թէ Ֆաթիմեան սուլթանաց 1048ին Ամալֆիացւոց շնորհած արտօնութեամբը հոն կը բնակէին։ Եւ Անգղիոյ Ռիքքարտոս Առիւծասիրտն կոչեցեալ թագաւորին հետ ըրած դաշնադրութեան ժամանակ 1191ին՝ Սալիզպուրիի եպիսկոպոս Հուպերտոսի աղաչանքովը ներեց որ երկու լատին կարգաւոր և երկու սարկաւագ սուրբ Գերեզմանի տաճարին մէջ կենան։ 1229ին Ֆրետերիկ Բ. կայսրը, թէպէտ և Գրիգոր Թ. Պապէն բանադրուած էր, վեցերորդ խաչակրաց գլուխ կեցած, կուգայ և Մալէք Գամէլի միտքը կը շինէ որ ի շնորհս Ֆրետերիկի Երուսաղէմի վերայ ունեցած իրաւունքէն կը հրաժարի, և կայսրը զինքը թագաւոր կը հրատարակէ ի մեծ գայթակղութիւն արեւմտեան քրիստոնէից։ 1239ին Երուսաղէմ կրկին Հագարացւոց ձեռքը կ'անցնի։ 1310էն մինչեւ 1341 Նասըր Մոհամմէտ, որ Պահարիտ Մամլուքներէն էր, իւր տեղակալաց ձեռօքը կը կառավարէր զԵրուսաղէմ։ Երկար ժամանակէն ի վեր և սուրբ Լուդովիկոսի մահուամբը, որ 1270ին Թունուսի ծովեզերքները վախճանեցաւ, խաչակրութեան ոգին մարած էր Եւրոպիոյ մէջ։ Ռոպէրտ տ'Անժու՝ Սիկիլիոյ թագաւորը, չէ թէ սուրբ տեղերը կրկին ծախու առնել, ինչպէս Էօժէն Պօռէ և իրեն հետ ուրիշ հեղինակներ ալ առանց ստոյգ տեղեկութիւն ունենալու պնդեցին, այլ 1342ին հազիւ թէ ընծաներովը հրաման առաւ Սիօն լերան վերայ Ֆրանչիսկեան կրօնաւորաց համար վանք մի շինելու. մինչեւ այն ժամանակ լատին կարգաւորաց առանձին եղողի միայն ներում կար Երուսաղէմ մնալու. որոնցմէ երկու հոգի Քրիստոսի Գերեզմանին կը ծառայէին, երկու հոգի Բեթլեհէմ և երկուք ալ ի Նազարեթ կը կենային։

Այս համառօտ պատմական տեսութենէս յայտնի կը ցուցուի, թէ 1187էն մինչեւ 1191ին ամենեւին լատին մի չկայր Երուսաղէմի մէջ. թէ Սալահէտտինի տիրելովը՝ խաչակրաց թագաւորի Կոտըֆրէ Պույյէոնի հիմնարկած տէրութեան իրաւունքը ոչնչացաւ, թէ բանադրեալ Ֆրետերիկ Բ. լատին կղերի մի հետ բնաւ յարաբերութիւն մի չէր կրնար ունենալ, և իւր թագաւորութիւնը խիստ կարճատեւ ըլլալով՝ չէր կրնար նոր իրաւունքներ հաստատել լատինաց համար, իրաւունք մ՚ զոր յետոյ իսլամ տէրութիւն մի նորէն առնելով զԵրուսաղէմ պիտի ջնջէր զայն անպատճառ. թէ Եգիպտոսի սուլթանները միջնորդ բռնելով կրցաւ Սիկիլիոյ թագաւորը 1342ին Ֆրանչիս-

(1) Մենք քիչեաւ հայ կաթոլիկաց Վարք սրբոցը շատ թղթատեցինք, բայց ամենեւին սրբուհւոյն Թեկղի վարուց պատմութեանը մէջ չգտանք և ոչ բառ մի Հայոց սուրբ Յակոբայ վանքին վերայօք։ Գուրմանի աւելի լաւ կ'ընէր որ լատին բնագիրները աչքէ անցընէր անգամ մի, ուսկէ առած է Հայերէն Վարք սրբոցին հեղինակը։

cession pour son clergé, du Couvent de Saint Jacques le Majeur à Jérusalem, alors propriété Espagnole; et qu' il l'obtint dans la course de l' année 1321. (1)

En 1187, Salah-eddyn, premier sultan Ayoubite d' Egypte, s'empare de Jérusalem, en chasse les Croisés et le clergé Latin, qui s'y était établi, soit après la conquête de Godefroid de Bouillon en 1099, soit par l' autorisation accordée par les Sultans Fatimites, aux Amalfitains en 1048, et ce ne fut que lors de sa trêve avec Richard Coeur de Lion, roi d' Angleterre en 1191 qu' il permit, à la prière d' Hubert évèque de Salisbury, à deux prêtres et deux diacres, du rite Latin, de s' établir dans le Saint Sépulcre, en 1229. L'empereur Frédéric II, bien qu' excommunié par le pape Grégoire IX, se met à la tête de la sixième Croisade, et parvient à décider Malek et Kamel de renoncer à sa faveur, ses droits sur Jérusalem, dont il se fait proclamer roi, au grand scandale des Chrétiens d'Occident. En 1239, Jérusalem est reprise par les infideles. De 1310 à 1341 Nasser Mohammed, des Mamelouks Baharites gouvernait par ses lietenants l'ex-royaume chrétien. Depuis long-temps, et par la mort de Saint Louis sur les plages de Tunis en 1270, l' esprit des Croisades s' était éteint en Europe. Robert d' Anjou roi de Sicile, bien loin d' acheter les Sanctuaires, ainsi que l'a prétendu Monsieur Eugen Boré, et d' autres auteurs avec lui, tous mal informés, parvient par ses présents, en 1342, à faire permettre la construction sur le Mont Sion, d' un Couvent pour les religieux de Saint François, jusqu' alors individuellement tolérés, dont deux devaient desservir le Tombeau du Seigneur, deux s' établir à Bethléem et deux à Nazareth.

Par ce rapide résumé historique il nous est démontré évidemment, que de 1187 à 1191, il n' y avait à Jérusalem aucun Latin; que la conquête de Salah-eddyn détruit les droits basés sur celle de Godefroid de Bouillon, Chef suprême des Croisés; que l' excommunié Frederic II, ne pouvait avoir de relations avec un clergé Latin quelconque, et son règne fut trop éphémère, pour avoir établi des nouveaux droits pour les Latins, droits que du reste, la nouvelle conquête Musulmane devait détruire; que ce ne fut qu' en intercédant les Sultans d' Egypte, que le Roi de Sicile parvint à y établir, en 1342, définitivement les Religieux de Saint Fran-

(1) Nous avons beau feuilleté dans le Martyrologe arménien catholique, le passage de la vie de Ste. Thècle, et nous n' avons pas trouvé un mot sur le Couvent arménien de St. Jacques. M. Gourmani ferait mieux de parcourir les textes latins empruntés par l' auteur du Martyrologe arménien.

կեան կրօնաւորաց խումբ մի հաստատել տալ հոն, այնպէս որ 1318 էն մինչեւ 1321 Եւրոպիոյ Թագաւորները և լատին ժողովուրդները քանի մի նուաստ կրօնաւորաց և սարկաւագաց միջոցաւ ներկայ եղած կը համարէին Երուսաղէմի մէջ, որոնք հերթհետէ ուրիշները կը յաջորդէին սուրբ Յարութեան տաճարին մէջ հոգեւոր պաշտօն մատուցանելու։ Եւ կրնանք յայտնի ըսել, ինչպէս որ ապացուցուեցաւ, որ 1318 էն և անկէ շատ ժամանակ ալ անցնելով՝ լատին կրօնաւորք չէ թէ մի [illegible] սուրբ Գերեզմանը, այլ եւ սուրբ քաղաքն ալ [illegible] ուցին եղան։

Ի յաջորդն։

çois, de manière que de 1318 à 1321, les Souverains et les peuples Latins de l' Europe, n' y étaient représentés, tout au plus, que par les humbles prêtres et diacres, qui se succédaient les uns aux autres pour officier d' après le rite Latin, dans l' Eglise de la Résurrection; et nous devons dire tout au plus, car il est presque prouvé, que vers 1318, et pour long-temps, le clergé Latin avait dù quitter non seulement le Saint Sépulcre, mais encore la Sainte Ville.

Sera continué.

ՄԱՂԹԱՆՔ

ԵՂԻՑԻՆ ԿԱՄՔ ՔՈ

Ով դու հանուրց դոյից Հաստիչ յաւիտենից դու ով Տէր,
Որ ՚ի բարձանց ՚ի ծոցդ Հօր առ մեզ իջեալ յայց եկեր.
Զանտանելիս կրեցեր զաղէտս ՚ի սէր մարդոյն անաղդակ,
Զոր յաղէտից փրկեաց հզօր աստուածային քո դաստակ։
Եւ դառնութեան յայն ՚ի սպահուն յորում Աստուածդ իմ մանիւր,
Հեղեղատիս այս Կեդրոնի անցեր յայնկոյս դու տրտում.
Եւ լի վշտօք անդ խոնարհեալ պաղատէիր առ քո Հայր
Եթէ լինի հնարին անցցէ բաժակդ ահաւոր։
Ազգ մի ողջոյն ՚ի մահաբեր անկեալ բաւիղ արդ հեծէ
Որհատական հառաչանօք մաշեալ ոգի իւր հիւծէ.
Եւ պաղատի ազատութիւն, լուր աղաչեմք Թշուառին,
Եւ տուր նմա ՚ի գըրմանէն կենդանիկ այժմիկ վերստին։
Տարաւ վշտաց և տանջանաց յաւուրն կալեալ խարխափ ալիդ,
Ճառ զրկանաց և գերութեանց համբերատար դառն միջոց.
Սակայն այժմիկ լքեալ անզօր՝ այլ ոտկալոյ չունի կար,
Եւ բաժակին իւր դառնութեան մերժումն ՚ի բաց հայցէ յար։
Հուր, սուր, բեկումն է իւր բաժին վտարանդի իմ ազգին,
Ատելութեան ձիւաղ անյագ ժանեօք մահու ըմպողին
Կեղեքելով մաշէ տակաւ, ծծէ ըմպիւթն կենսական,
Տուր անցանել եթէ կամիս, Տէր, բաժակին դառնութեան։
Ոհ, մնացաւ արդ իմ ըղձեր, եթող ըզ Տէրդ մարդասէր,
Եթող զհաւատ, ըզբարութիւն մատնեալ յեղծումն և յաւեր.
Յաւեր անշէն փոխեցաւ արդ և նշաւակ անցորդաց,
Եւ տակաւին լեղի բաժակն դառն ակէտից իւր չէանց։
Այս դարաւոր յաւաց դարման բաց ՚ի քէն, Տէր, չիք այլ ոք,
Հասցես ՚ի մեզ, արդ աղաչեմք, զի մի մնասցուք մեք անօգ.

Տո՛ւր փրկութիւն հզօր բազկաւ այս խաւթացեալ իմ ազգին,
Եւ քաղցրացո ժամու դառնութիւն մահահրաւէր բաժակին:
Ուր մարդկային կամք հանձնի և լռէ ի զօրութիւն,
Ուր ազատի յոյս առ 'ի մէնջ, և ուր արտասուք անզօր ազան.
Ընդ, Աստուած իմ, քո զօրութիւն փոյթ ժամանէ յօգնութիւն,
Ընդ և բաժակին դառնութեան փոխի յախորժ քաղցրութիւն:
Եթէ կամիս, զխնդիրս իմ Տէր, զի կարող ես փութապէս
Սրբել, փրկել, կենդանարարել և տալ կանգնումն հրաշապէս.
Ապա թէ ոչ այս հէք մնձակ իցէ բաժին մեր կենաց,
Պաշտելի է դարձեալ կամք քո, լիցի լոկ քոյդ սուրբ կամաց:
Եւ մեք յօժար յաւիտեան
Ջանիցուք ձայնել հլութեան
Կամաց Վեհիդ բարերար.
Կամք գթութեանդ ապաստան,
Եւ մինչ յատակ աղէտից,
Ըմպեմք յօժար բաժակին:

Կ. Յ. Ե.

Ազգային երաժշտութիւն:

Երաժշտութիւնը մարդուս հոգւոյն և սրտին զգացման արձագանքն, անոր ծագումը մարդկութեան ժամանակակից (Ծննդ. Դ. 21), իւր ներգործութիւնը խիստ ազդու, և միանգամայն ժողովուրդի մը կրթութիւնը կրթելու զօրաւոր միջոց մը ըլլալը, յայտնի ճշմարտութիւններ են: Ո՞չ ապաքէն Որփէոսի քնարին զքանչելիքը, Դաւթի տաւիղին ազդեցութիւնները և ասոնց նման դէպքեր հանրածանօթ են. ո՞չ ապաքէն մարդս բնապէս երաժշտական ձայներէ զգածուելուն համար է որ իւր բոլոր կենացը մէջ անոր ազդեցութեանը ենթակայ է. օրօրոցին մէջ անով կը ննջէ, ուրախութեան մէջ անով կը զուարճանայ, տրտմութեան մէջ անով կը սփոփի, և մինչև 'ի յաւիտենականութեան դուռը անոր տխուր մրմունջներովը կ'երթայ: Ուստի 'ի սկզբանէ հետէ մարդկային ազգը ընտելացած է երաժշտութիւնը, և ի գործ ածեր է զայն իւր կրօնական պաշտամանց, քաղաքական հանդիսից և ընկերական կենաց մէջ: Թողունք մարդկային ազգը, ո՞չ ապաքէն Հրեշտակաց դասերն ալ իրենց Սրբասացութիւնքը և Ալէլուքը՝ երաժշտական հոգեղէն հնչմամբ առ Բարձրեալն Էմմանուէլ մատուցանելէն քրիստոնէական եկեղեցւոյ մէջ ալ ընդունուած սրբազան աւանդութիւն մ'է.

Սակայն՝ ինչպէս որ մարդկային ազգին լեզուն, ընկերական ու քաղաքական վիճակը և կրօնական հանդէսը զանազան ազգաց մէջ տարբեր եղած է, նոյնպէս և երաժշտութիւնն ալ այլ և այլ տարբեր դաշնակներ ու ձայնից զանազանութիւններ ունեցած է, ազգի մը յառաջադիմութեան, զգացման և մինչև անգամ բնակած երկրին հանգամանաց համեմատ. այնպէս որ ազգ մը որչափ կիրթ ճաշակ, փափուկ զգացում և վառ երևակայութիւն, նոյնչափ ալ կանոնաւոր ու գեղեցիկ երաժշտութիւն ունեցած է. և ընդհակառակն ազգ մը որչափ յետադէմ, կոշտ և անզգայ կամ մեղկ ու թոյլ եղած է, այնչափ ալ անդաշնակ և անկանոն, կամ մեղկ ու թոյլ երաժշտութիւն մը ունեցած է. Հետևաբար ազգի մը երաժշտութիւնն իւր հոգւոյն և զգացման պատկերն է: Սակայն թողլով այս ընդհանուր տեսութիւնը, մասնաւորենք խօսքերնիս մեր ազգային երաժշտութեան վերայ:

Ամեն ազգի երաժշտութիւնը որչափ ալ իրարմէ տարբեր, այլ հիմնապէս մէկ ըլլալով, միայն թէ ձայնից զանազանութեան և ներդաշնակութեան կանոններով իրարմէ կը տարբերին, որուն համար մանրամասն օրինակներ ցուցնել դժուար ըլլալով, կը յիշեցնենք միայն արդի երաժշտութեան եւրոպական ու արևելեան-ասիական երկու գլխաւոր ձևերը, որոց երաժշտական ձայներու առաջնականները զրեթէ միևնոյն են և միայն եղևէջի տարբերութեամբ կը զանազանին իրարմէ դաշնակի մասին. այլ հանդերձ այսու շատ եղանակներու մէջ ալ կը համաձայնին միմեանց հիմնական կազմութեամբ: Բայց իրարու հետ անմիջական յարաբերութիւն ունեցող ժամանակակից

ազգաց երաժշտութիւնը այս տանիձան զգալի առա-
ջընթացութիւն չունենալով. շատ կերպիւ կը նմանին մի-
մեանց, ինչպէս է այսօր յարեւելս. ուր ամէն ամէն
ազգ որչափ ալ իրարմէ տարբեր՝ այլ եղանակ մի և նոյն
ձայնի զանազանութեամբ մի և նոյն եղանակները ու-
նին: Այս պարագայիս մէջ երաժշտական տիրող գաղա-
փարը գլխաւորապէս այն ազգինն է, որ կամ այն ժա-
մին աւելի յառաջադիմութիւն և կամ ինչ և իցէ կեր-
պիւ ազդեցութիւն մը ունեցեր է միւս ազգաց վե-
րայ, ինչպէս են այսօր յարեւելս Օսմանցին, Պարսի-
կը, Արաբացին: Եւրոպայի մէջ ալ այնպէս է. նախ-
կին հելլենական և հռոմէական գաշնակն է որ տիրած
է եղաչէս ամէն ազգի մէջ. թէ եւ տանն տանն այս
մասին փոփոխութիւններ մտած են և ամէն ազգ ալ
իրենց մասնաւոր ճաշակն ունին իրարմէ քիչ շատ
տարբեր:

Մեր ազգն ալ աշխարհիս հին ազգերէն մէկն ըլ-
լալով, որչափ ալ միշտ ուրիշ ազգաց հետ յարաբե-
րութեան մէջ և շատ անգամ անոնց ազդեցութեանը
ենթակայ եղած է. այսու ամենայնիւ եթէ Արաբա-
ցւոյն և Պարսկին նման գլխաւոր ու տարածուն երա-
ժշտութիւն մ՚ալ ունեցած չըլլայ, տակաւին պէտք
է ունեցած ըլլայ իւր մասնաւոր երաժշտութիւնը,
ազգային ճաշակը և երաժշտական հնչիւնը, քանի
որ ժամանակին ուրոյն կառավարութիւն մը և մինչե-
ւայժմ ալ լեզու մը, անխախ եկեղեցի մը և ընկերա-
կան կեանք մը ունեցած է և ունի ցարդ. Ի հարկէ
մեր Գողթան գաւառն ալ, այժմեան պարսկական
խուժանին, սրբազան հեծանլին և այլոց նման իւր
մասնաւոր եղանակներն ունէր, և իւր քնարներն ի-
րենց գողթական գաշնակն և իւր քանաստեղծ եր-
գիչներն ալ իրենց ազգային ճաշակն ու ազգային ե-
րաժշտական հնչիւնն ունէին. բայց արդեօք այսօր
մի քանի երաժշտական գործիներու անուններէ և
բառերէ և հատակոտոր երգերէ զատ, ինչ ունինք
ի ձեռին, որք թէ և ազգային գրականութեան հա-
մար մեծ արժէք ունին՝ այլ ազգային երաժշտութեան
համար գործնական օգուտ չեն ընծայեր. արդեօք
մեր ազգն ալ այսօր եթէ ոչ իւր Գողթան եղանակնե-
րը գոնէ իւր ազգային երաժշտական ճաշակն ու հնչ-
իւնը մասամբ իւրը կրցած է պահել, ինչպէս որ պա-
հած են մեզի մերձակայից ազգերը, Յոյնը, Հրեայն,
Պուլկարը, Ալպանիացին, և այլք:

Պ[illegible] Շահ[illegible]նեան:

ԿՐՕՆԵԿԱՆՔ

ՍԱՄՈՒԷԼ ՌԱԲԲԻ ԵՒ ԻՒՐ ԳԻՐՔԸ

(Շարունակութիւն. տես թիւ 5:)

ԳԼՈՒԽ Ժ.

Քրիստոսի առաջին գալուստը:

Կը փափագիմ, տէր իմ, որ Աստուած

Քրիստոսի երկու գալուստը յայտնի կը
նշանակէ Եսայեայ մարգարէի բերնով
Ե. գլուխ՝ ըսելով. “Արթնցիր, ար-
թնցիր ու զօրութիւն հագիր վերայդ
Սիոն քաղաքը(1): Երկու անգամ կը
կրկնէ արթնցիրը՝ անոր երկու գա-
լուստը ցոյց տալով: Եւ տեսակարար,
այնինքն յառաջադէս ու յաջորդաբար Ծ.
և Ծ.Գ. գլուխներուն մէջ կը ցուցնէ
Քրիստոսի առաջին գալուստը, այնին-
քն ինչ որ անոր չարչարանքներուն և
արհամարհութիւններուն կը վերաբե-
րին: Եւ աւելի տեսակարար, այն է
աւելի յատկապէս կը ցուցնէ՝ ըսե-
լով. “Տեսանք զանիկայ որ չունէր ե-
րես, ոչ տեսիլ, և ոչ գեղեցկութի(2):
Նոր առաջին գալուստը իններորդ
գլխուն մէջ կը դնէ Նոյն՝ ըսելով.
“Մեզի մանուկ ծնաւ”. և անմիջապէս
կ՚աւելցնէ անոր երկրորդ գալուստը
ըսելով. “Եւ կոչուի խիստ ու ժամուոր,
Հզօր. Դաւթի աթոռը նստի
որ հաստատէ զայն միջոցէն մինչեւ
յաւիտեան(3)”: Եւ Զաքարիա մար-
գարէն Թ. գլխուն մէջ կը ցուցնէ
զանիկայ աղքատ ու իշու վրայ նս-
տած. և տակաւ ուրիշ ինչ նշանակել
կ՚ուզէ մարգարէն, եթէ ոչ՝ անոր ա-
ռաջին գալուստը միայն ըլլալ խոնարհ,
իսկ երկրորդը՝ հզօր ու փառաւոր: Այս-
պէս Դանիէլ մարգարէն ալ, Է. գլու-
խոյն մէջ եղածովը կը ցուցնէ զանի-
կայ այսպէս ըսելով. “Կը տեսնէի գի-
շերուան տեսիլքիս մէջ, և ահա երկ-
նից ամպերուն վրայ՝ որդւոյ մարդոյ

(1) Զարթիր զարթիր Երուսաղէմ, և զգեցիր զզ-
օրութիւն բազկի քո: Եսայ. ԾԱ. 9:

(2) Տեսաք զնա՝ և ոչ գոյր նորա տեսիլ և ոչ
գեղեցկութիւն: Եսայ. ԾԳ. 2:

(3) Եւ անուն կոչեսցի նորա Հրեշտակ մեծի խոր-
հրդոյ, սքանչելի խորհրդակից, աստուած, հզօր,
իշխան, հայր հանդերձելոց աշխարհին: Եւ եւ ա-
ծից խաղաղութեան ի վերայ իշխանաց նորա, և ո-
ղջութիւն նմա. մեծ է իշխանութիւն նորա, և
խաղաղութեան նորա չիք սահման: Յաթոռն Դաւ-

նման կուգայր և մինչեւ հին աւուրցին քով հասաւ . և անոնք բերին զինքը նորա առաջը , և տուաւ անոր իշխանութիւն , ու պատիւ ու թագաւորութիւն . և ամէն ժողովուրդները , ազգերն ու լեզուներ պաշտեն զանիկայ և ծառայեն անոր (1) ” ։

Ու յայտնի է , Տէր իմ , որ Քրիստոս երկրորդ գալստեան ժամանակ հին աւուրցին՝ այսինքն Աստուծոյ առաջը նստելու է դատելու , ինչպէս որ առաջին գալստեանը մեր Հրեայ հարերուն առաջը նստաւ դատելու համար։ Ահա Դաւիթ մարգարէն Մեսիային այսինքն Քրիստոսի երկու գալուստն այլ նշանակեց ըսելով . “ Թէ կուգայ , և կուգայ անիկայ երկիրը դատելու ” . ՂԵ . 13 ։ Առաջին գալստեան համար՝ որ պարզ գալուստ մի է , Կուգայ կ՚ըսէ , իսկ երկրորդին համար՝ որ զօրութեամբ մէկտեղ պիտի ըլլայ , կուգայ երկիրը դատելու կ՚ըսէ ։ Նոյր երկրորդ գալստեան համար Զաքարիաս այլ կ՚ըսէ ԺԴ գլուխը . “ Ոտքերը՝ նշանները նկարեն ձիթենեաց լերան վերայ (2) ” ։ Ու մեք , Տէր իմ , կ՚ըսեմք թէ Աստուած էութեամբն ու բնութեամբ ոտք ու մարմին չունի , և ոչ ուրիշ մարմնական իր մի . և ոտք ունենալը մարմնաւոր ստեղծուածներուն կը վայելէ ։ Դարձեալ Դաւիթ մարգարէն նորա երկրորդ գալստեան համար խօսելով , ինչպէս վերն այլ ըսինք , կ՚ըսէ . “ Նորա առաջը կրակ բորբոքի . և նորա բոլոր տեղը բոցով այրուի (1) ” ։ Իսկ մեք չեմք ըսեր՝ թէ Աստուած տեղ մի կը պարագրի , և թէ անոր նման հզօր մի կայ , որ նորա բոլորակը կենայ . այլ ասոր պէս վկայութիւնները՝ ինչպէս որ գրուած են , այն արդարը կը ճշմարտեն , զոր մարգարէները կը ցուցնեն . և այս վկայութիւնները երբեմն նորա խոնարհութիւնը և երբեմն նորա մեծութիւնը ցոյց կուտան ։ Նորա համար կ՚ըսէ Մաղաքիա Գ. գլուխը “ Ահա Տէրը կուգայ , և ո՛վ կարէ նորա գալստեան առաջը կենալ . վասն զի կրակի նման նա կը ձուլէ , և պիտի նստի արծաթն ու ոսկին ձուլելու (2) ” ։

Հաւատալիկ տես՝ թէ ինչ կերպով պիտի գայ երկրորդ գալստեանը այն արդարը որ դատեցին ։ Ու տես , Տէր իմ , թէ ինչ կերպով նոյն մարգարէն նոյն Գ. գլխոյն մէջ Մեսիային կը ցուցնէ ըսելով . “ Այն ատեն ես պիտի գամ ու մօտենամ դատաստանով անոնց մէջ , և ճշմարիտ վկայ պիտի ըլլամ չնայող և չար կանանց , երդում ընողներուն և վարձկանաց վարձը կողոպտողներուն , և որբերն ու այրիները կողոպտողներուն , և օտարն ու աղքատը նեղողներուն (3) ” ։ Նոյնը կը գրէ , Տէր իմ , Ե-

թի նստի , և զարդարութիւն նորա յաջողեսցէ , և զօրացուսցէ զնա խրատամբք և արդարութեամբ , յայսմհետէ և յաւիտեանս ժամանակաց։ Եսայ Թ. 6. 7։

(1) Տեսանէի ի տեսլեան գիշերոյ և ահա ընդ ամպս երկնից իբրեւ որդի մարդոյ գայր , և հասանէր մինչեւ ի հին աւուրցն , և մատուցան առաջի նորա ։ Եւ նմա տուաւ իշխանութիւն և պատիւ և թագաւորութիւն . և ամենայն ազգք և ազինք և լեզուք նմա ծառայեսցեն . և իշխանութիւն նորա իշխանութիւն յաւիտենական որ ոչ անցանէ , և թագաւորութիւն նորա ոչ եղծանիցի ։ Դան . Է . 13 . 14 ։ Հոս լատին թարգմանիչը այն երկու անհամաձայներուն երրայականին և վուլկատային և քանի մի ուրիշ ընագրաց թարգմանութիւններն ալ մէջ կըլերէ , զորոնք զանց կ՚ընեմք կրկնելու ։

(2) Եւ կացցեն ոտք նորա յաւուր յայնմիկ ի վերայ լերինն ձիթենեաց՝ հանդէպ Երուսաղէմի յարեւելից , և պատառեսցի լեառն ձիթենեաց , կէսն նորա յարեւելս , և կէսն նորա ի ծով , վիհ մեծ յոյժ . և խոնարհեսցի կէս լերինն առ հիւսիսի , և կէս նորա առ հարաւ ։ Զաք . ԺԴ . 4 ։

(1) Հուր առաջի նորա բորբոքեսցի , և շուրջ զնովաւ մրրիկ յոյժ ։ Սաղմ . ԽԹ . 3 ։

(2) Ահաւասիկ գայ ասէ տէր ամենակալ . և ո՞վ ժուժկալեսցէ աւուր մտի նորա , և ո՞ հանդարտեսցէ յայտնութեան նորա . զի նա մտցէ իբրեւ զհուր հալոցի , և իբրեւ զոճառ լուացողաց ։ Եւ նստցի ուրբել և ձուլել իբրեւ զարծաթ և իբրեւ զոսկի ։ Մաղ . Գ . 2 . 3 ։

(3) Եւ հասից ի վերայ ձեր դատաստանաւ . և ե.

Եզեկիէլ այլ ԼԴ գլուխը, ուր տեղ որ հալածներու և ոչխարներու համար կը խօսի. «Եւ զատեմ անանցմէ (1)», այսինքն արդարներէն յանցաւորներն ու անհաւատները։ Ահա Տէր իմ, ահա այսպէս երկրորդ գալստեանը պիտի զատէ անհաւատները արդարներուն մէջէն, ինչպէս որ Եզեկիա և Մաղաքիա յայտնապէս կ՚ըսեն, (Մաղա. Գ. 18)։ Անոր առաջին գալստեան ժամանակ մեղաւորներէն մէկը չճանչցաւ զինքը, վասն զի գերազանց է և մարդկային բնութեան լերներէն կ՚անցնի, ինչպէս որ կը պատէ Աստուած Եսայեայ մարգարէին բերնով ԾԳ գլխոյն մէջ. «Ընդ անօրէնս համարեցաւ, և վասն այսորիկ ոչ համարեցայք զնա» (2)։ Եւ Երեմիայն ԺԷ գլխոյն մէջ կ՚ըսէ. «Նա է մարդ, և ով կը ճանչէ զինքը (3)»։ Եւ կը վախնամ, Տէր իմ, թէ մեր հայրերը Մեսիային առաջին գալստեանը անկէ հեռացան և մեղանչեցին, և մեք անոր համար այս անխախտան գերութեան մատնուեցանք. սակայն ինչ որ այլ պատահի, Աստուծոյ եմք՝ թէ որ անոր յուսալու ըլլամք։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Քրիստոսի երկրորդ գալուստը, յորում զօրութեամբ մեծաւ պիտի գայ։

Կը վախնամ Տէր իմ, չըլլայ այն արդար դատաւորն ըլլայ նա՝ որ իւր երկրորդ գալստեանը հանդերձ զօրութեամբ պիտի գայ, նա որ առաջին գալուն՝ փրկիչ է բոլոր իրեն հաւատացողներուն. վասն զի Դաւիթ մարգարէն կ՚ըսէ (ՂԷ. 2) «Ցոյց տուաւ իւր փրկութիւնը, ազգաց առջեւ յայտնեց իւր արդարութիւնը»։ Եւ Եսայի ԺԲ գլուխը այսպէս կ՚ըսէ. «Փրկչին աղբիւրներէն քաշեցէք ջուրը» (1)։ Այս խօսքերս ալ՝ ինչպէս որ ինծի կը թուի, մկրտութիւնը կ՚իմացուի. որովհետեւ առջի գալուն ջրով ապրեցուց, երկրորդին՝ հրով պիտի դատէ։ Եւ Յոբ ԺԹ գլխոյն մէջ նոյն իւր Փրկչին համար կ՚ըսէ, Տէր իմ, «Գիտեմ որ իմ Փրկիչս կենդանի է, և թէ՝ նոր օրը գալուն գետնէն յարութիւն պիտի առնում. և իմ մարմնովս աչքերս պիտի տեսնեն իմ Աստուածս» (2)։ Տես, Տէր իմ, Յոբ զինքը փրկիչ Աստուած կը կոչէ. և յայտնի բան է որ մարմնոյն աչքերը չեն կրնար զԱստուած տեսնել։ Ահա սուրբ գրքերը յայտնի կը ցուցընեն մեզ՝ թէ փրկիչ ըսածը այն արդար Աստուածն է, որոյ համար է խօսքը, որ միայն կրնայ ճշմարտապէս Աստուած ըլլալ, որովհետեւ և ոչ մի մեղք գործեց, և ոչ նենգութիւն անոր բերնին մէջ գտնուեցաւ (3)։ Ոչ Մովսէսի և ոչ ուրիշ մէկ մարգարէի համար ըսուեցաւ երբէք թէ փրկիչ է, արդար է, ու անմեղ։ Որովհետեւ, ինչպէս գիտէք Տէր իմ, Մովսէս մեղք գործեց, և բոլոր մարգարէք նոյնպէս մեղանչեցին, վասն ո-

---

զեց վկայ արագ ի վերայ կախարդաց և կանանց շնացելոց, և ի վերայ այնոցիկ որք երդնուցուն յանուն իմ սուտ թեամբ. և որոց հատանիցեն զվարձս վարձկանի, և որ յաղթահարին զայրին և զորբս, և խոտորիցեն զիրաւունս պանդխտին, և որ ոչ երկնչիցին յինէն, ասէ տէր ամենակալ։ Մաղ. Գ. 5։

(1) Եզեկիէլի ԼԴ գլուխը գրեթէ ծայրէ ի ծայր նոյն խմաստը կ՚ընծայէ։

(2) Եւ ընդ անօրէնս համարեցաւ, և նա զմեղս բազմաց վերացոյց և վասն անօրէնութեանց նոցա մատնեցաւ։ Եսայ. ԾԳ. 12։

(3) Եւ մարդ է, և ով ծանիցէ զնա։ Երմ. ԺԷ. 9։

(1) Եւ առէք ջուր յաղբերաց փրկութեան. Եսայ. ԺԲ. 3։

(2) Քանզի գիտեմ զի մշտնջենաւոր է որ լուծանելոցն է զիս յերկրի յարուցանել զմարմին իմ որ կրեալ զայս ամենայն։ Ի տեառնէ վճարեցաւ ինձ այս, զոր ես անձին իմում գիտեմ, զոր աչք իմ տեսին և ոչ այլ ոք։ Յոբ. ԺԹ. 22։

(3) Զի անօրէնութիւն ինչ ոչ գործեաց, և ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա։ Եսա. ԾԳ. 9։

րոյ գիրը անանցնէ և ոչ մին տրտում կ'անուանէ , այլ այս անունը միայն իրեն համար պահէ : Երկբայութիւն չկայ որ ուրիշները ջանան փրկուիլն , այլ անոնք միայն՝ որ նոյն տաճի դալուսոյ կը հաւատան . և չհաւատացողները պատճառ մի չունին , որ այն պատճառաւ երկրորդ գալստեանը զանոնք ալ փրկէ , այլ արժանի են մահուան : Ըստ որում անոնք որ Մովսէսին՝ որ մեզմէ առաջ անձն մի էր , չհաւատացողներն ու մոլի չինոյները մահուան արժանի եղան , որչափ աւելի կրակի մէջ այրելոյ արժանի են անոնք որ չեն հաւատար ու կը հայհոյեն նոյն արդարը , որ բնաւ մեղք մի չգործեց : ասկայն ինչ որ այլ պատահի , մեք Աստուծոյ ենք :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ամսոյս 13 ին Վեհափառ Աւստրիական Կայսեր գահակալութեան տարեդարձին շնորհաւորութեան համար բոս տէրութեան թէ Ամենապատիւ Պատրիարքունք և թէ Մեծապատիւ Հիւպատոսք փութային երթալ Վեհափառն Կառավարչին պալատը : Նորին վեհութիւնը պատուոյ կարգի կերպիւ ընդունեց իւրաքանչիւր այցելուքը . պալատին դրան դէմ երեք կարգ աքունի զինուորաց կը սպասէին ի պատիւ այցելուաց , և զինուորական երաժիշտք քաղցր եղանակներ կը դաշնակէին : Իսկ ինքը Վեհափառ Նաղիֆ փաշայն իւր պատուոյ համազգեստը հագած՝ այնպէս կը դիմաւորէր իւր մեծապատիւ հիւրերուն : Նոյն գիշերուան Ճրագավառութեան հանդէսը նշանաւոր եղաւ ինչպէս միշտ՝ նոյնպէս և այս անգամ ալը Ցակոբայ մեծ վանքին աղջիկ : Դրան մերոյ դրուած էր Վեհափառ Կայսեր լուսանկար մեծ պատկերը զարդարուն չքնաղակաւ . նոյնպէս և մեծ դուռը զարդարուած էր բազմաթիւ կանթեղներով և ծաղիկներով : Բազմութիւնք ամէն ազգէն կը խռնէին երաժշտաց ունկնդրութեանը : Վեհափառ Փաշայն մէկ ժամու չափ նստելով Ամենապատիւ Արքապան Հօր քով՝ իւր ներկայութեանը բարեհաճեցաւ պատուել զաւուրս Աթոռս և զհանդէսը :

— Արքունեաց Դպրանոցի տօնին օրը սովորութիւն է քաղաքիս օրիորդաց վարժարանին մէջ թէ ուսման և թէ աշխատասիրութեան մասնաւոր հանդէս մի ներկայացնել : Այս անգամ ևս այն հանդէսը տեղի ունեցաւ , և բոլոր քաղաքացի հանդիսականք մեծ գոհութեամբ տեսան իրենց աղջկանց բանած տեսակ տեսակ աշխատասիրական արդիւնքները , որոց սկզբնաւորութիւնք հազիւ չորս ամիս կայ : Մեծապատիւ Նազարէթ աղայն Ա. Դափամաճեան , որ միաբանութեան կողմէն հրաւիրուած էր ի հանդէսն , բարեհաճեցաւ 2 օսմանեան լիրա վարժատան նուիրել այն նպատակաւ , որ աշխատասիրական արդեանց մրցանակութեան ժամանակ (որ ամէն ընթացք ուսուցման ատենը ,) իրեն անուանը ևթէ եկեղեր բլոյ , կրկին վարժատան նուիրուի : Բայց ի սմանէ յետոյ աղջկաներ աղայն երկու օրինակ ալ Մխոն ամաթերթէն նուէր կը մատուցանէ յանուն իւր՝ Օէյթունի դպրատանց :

Անգղիոյ տէրութեան մէջ և բուն մեծի մասին Իռլանտայի մասին մէջ հռոմէական եկեղեցի և բազմաթիւ ժողովուրդ դանուէին գիտեմք , որոնք Հռոմայ աթոռոյն անձնանուէր ուջերմ հպատակներ են կոչուի ; սա-

կայն նոյն անթուղթ խոստովանութեանցն գոլով ուրիշ ուղղափառ եկեղեցի մ՚ալ ըլլալը չեն ընդունիր։ Ներկայ ատեն այս մէջ ներկայացուած է ասոր Ըլթուըն տոր Ուիլէհմ Ուիլեամ Մալէգ անուն կարգաւոր մի, որ կ՚անուանէր զինքը անդամ Անկլիքէրայի եկեղեցւոյ (Église d'Angleterre). Իւր արտաքին կերպարանքովը ու հագուստովը գրեթէ Գրանչիսկեան կրօնաւորներէ մեծ տարբերութիւն մի չունէր։ Իրենց կարգին անունն է որդոյն Յովսեփայ, և այս կարգը հաստատողն է եղեր Հայր Երթուր։ Իսկ իրենց եկեղեցւոյ գլուխն է Բաւալը Թոմաս Քանդուսար, եպիսկոպոսապետ և մետրապօլիտ. աթոռն է ի Քանդորպէրի, իսկ ինքը կը բնակի Թամիզ գետին եզերքը Լամպէթ պալատին մէջ և է անդամ Անգլիոյ բարձրագոյն խորհրդարանին և ամենաակնանց ժողովոյն։ Յիշեալ եկեղեցին Հռոմայէն բաժնուեր է վեց տասներորդ դարուն Հենրիկոս Ը ի ժամանակ. դաւանութիւններն գրեթէ Հռոմայ եկեղեցւոյն է՝ քանի մի տարբերութիւններով. նախ Պապին գլխաւորութիւնը կը մերժեն. երկրորդ սուրբ պատարագը փոխանակ Լատիներէնի Անգլիերէն լեզուով կը կատարեն. երրորդ ժողովուրդը երկու տեսակաւ կը հաղորդեն։

Ուիլէհմ Մալէգ տուրը քաղաքս ուխտի եկած ըլլալով, և որքան ատեն վեաց վերայ պատարագ մատուցանելը տեսնել բաղձալով և լաւ[illegible] կամէն մերժուելով, խնդրեց յատկապէս սուրբ Աթոռէս որ շնորհէ իրեն սուրբ խորհուրդը մատուցանել որ և է հայկական եկեղեցւոյ մէջ, զոր կ՚ընդունի երբեւ ուղղափառ։ Մեծափառութիւնս նորա փափաքը անտեսելով և որչափ կարելի է՝ ձանձրացնել անոնց եկեղեցւոյն ուղղափառութիւնը, քրիստոնէաբար շնորհեց նմա՝ որ Հոգւոյն սրբոյ փոքրիկ մատրան մէջ կատարէ սուրբ խորհուրդը։ Ասով ընդունեց Մալէգ և ներկայ ամսոյս 6 ին մատուց պատարագ լատ մարդասիրութեան Հայոց, սովորական հայկական նշխարով և առանց ջուր խառնելու բաժակին մէջ. որով հաղորդեցաւ ինքն ու հետն եղող ուրիշ աշխարհական մի։ Յիշեալ եկեղեցին քահանայից ամուսնութիւնը արգիլած չէ, ինչպէս և Ուիլէմ պրն քահանայ է, և որդի մի ունի եղեր Հնդկաստան զինուորական պաշտօնի մէջ։

Ութ ամսէն ի վեր է Դամասկոսի մերայնոց Թուաւոր ժողովոց մէջ եւս սկսած է ուսումնասիրութեան և յառաջադիմութեան ջանք մի տեսնուիլ շնորհիւ Արժ. տեառ Գառնիկաս վարդապետի և իւր օգնական Արժ. Մեսրոպ վարդապետի։ Թէպէտ եւ առաջ եւս կար հասարակ ընթերցանութեան դասատուութիւն, բայց Արժ. Մեսրոպ վարդապետս հոն երթալէն ի վեր սկսած է նաև քերականութեան և ուրիշ քանի մի ուսմունքներ դաս տալ, և երկու անգամ՝ մէկ մի եռամսեայ և երկրորդ անգամ վեցամսեայ քննութիւն տուած են, որոց վերայ անձամբ երեւելի ազգայինք շնորհակալ լինելով Ամեն. Սրբազան Պատրիարք Հօրէն, այսպէս կը գրեն յիշեալ քննութեան հանդէսին վերայ։

"Այս անգամ ՚ի տօնի Հոգեգալստեան հրաշափառ աւուր անդուստ վարժարանի երեւան հովիւ բազկացեալ աշակերտաւները բարեբախտեցան իրենց հասակին ու կարեացը համեմատ վեցամսեայ քննութեան հանդէս մի ներկայացնել ՚ի ներկայութեան ընդհանուր ազգային երեւելեաց և հասարակ ժողովրդոց, որոց հետ բա-

րեհաճեցան նաեւ ներկայ գտնուիլ հռովմէական Հայոց արժանապատիւ Յակոբ վարդապետը և նոյն ազգի ականաւոր քանի մը անձինք։

«Թէպէտ ամէն յառաջ ալ, որպէս յայտնի է Ձերումդ բարձր Արքայութեան, որ ՚ի տօնի սրբոց Վարդանանց եւ ամենայն քննութիւն ըլլալով մի միայն կիսով չափ Քրիստոնէական հարց պատասխանին ՚ի բերան ուսեալ և այլ զանազան կերպիւ գրութիւններ ու ազգային երեք չորս չափ երգերով հանդէս մը եւս կատարեցաւ ՚ի ներկայութեան ազգայնոց, սակայն այս անգամ անկէ աւելի շքեղ ըլլալով ուրախութիւն մը զգացին հանդիսականք։

«Նախ և յառաջ կրկնաւոր աշակերտաւք ամբողջ Քրիստոնէականը ՚ի բերան ուսեալ հարց պատասխան ընելով, ու մէջ ընդունուածը տասնի չափ ազգային երգեր ըսելով աւարտեցին. այնուհետեւ Պօլէտախեանեան մանկավարժ Յակոբը և Գրիգորեան Խաչատուրը, որոնք վեց ամսէն ՚ի վեր Սերովբ վարդապետէն Քերականութե արհեստին դասատուութիւն ըրած ըլլալով մէկ մէկ ճառ կարդացին, որ յիշեալ մանկավարժ Յակոբը տրաւանդ աւրն իրեն նիւթ առած՝ անոր արդիւնքը բացատրեց. իսկ միւս Գրիգորեան Խաչատուրը ուսումնասիրութիւնը ու գիտութիւնը իրեն նիւթ առած անոր արդիւնքը բացատրեց. և հուսկ ամենայնի վարժատան աշակերտներէն ի զատ 5–6 հոգի Հայոց պատմութիւնը համառօտիւ սկիզբէն մինչեւ ներկայ Սահմանադրութեան դարուս մէջը 32 հարց պատասխանիներով ի բերան ուսեալ ներկայացուցին. որոնք եւս նոյն տասնի չափ երգերուն ձայնակից և որոշակի նուագերգու ըլլալով, մեծ ուրախութիւն տուեցին. որոնց վրայ քաջայոյս եւ վստահ եմք որ Ձեր Արքայութեան աղօթիւքը աւելի յառաջադիմութիւն կ՚ունենան»։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾՔ

Հարցուն մի իմաստասէր, թէ զո՞ կոչես անիրաւ։ Ասէ՝ զայնուիկ որ ոչ հնազանդին օրինաց, և կամ ոչ հաւանին այնմ։

Սելեւկոս զօրէնսն նմանեցուցանէր սարդի ոստայնից. քանզի յորժամ ճանճ, կամ մժեխ և կամ այլ ինչ փոքրագոյն կենդանեաց ոք անկանին ի նոսա, անդէն ըմբռնին. իսկ եթէ մեծակ, կամ մեղու և կամ յայլոց այսպիսեաց միջատաց անկանիցին, խզեն զնոսա և առ ոտն հարկանելով ի բաց թռչին։ Այնպէս են և օրէնք. յորժամ յաղքատաց ոք ըմբռնի նա, ըզզօրութիւն իւր յայտնի արարեալ նոմա՝ խոնարհեցուցանէ զնա. իսկ յորժամ ի մեծամեծաց ոք իցէ և ի փարթամաց, խզեալ զօրէնսն արտաքս ընդ այն եղանէ։

Սողոն օրէնսդիր հարցեալ, եթէ իւ ազնուանայ քաղաք և ծաղկի. ասէ՝ յորժամ քաղաքացիք հնազանդին իշխանաց, և իշխանք օրինաց։

Արքեղայոս ասէ. ուր դեղք և բժշկք բազում, անդ և ցաւք բազմապատիկք. և ուր օրէնք յաճախ, անդ և անօրէնութիւնք յոլովք։

Եպիկուրոս ասէ. որպէս փրկութիւն հիւանդաց է բժիշկն, նոյնպէս և զրկելոց՝ օրէնքն։

Բաղդասարեան Յակոբ աղա :
Բուդաղեան Ստեփան աղա :
Գաբրիէլ աղա (մահտեսի) :
Գաբրիէլեան մահտեսի Մկրտիչ աղա ոսկերիչ :
Գալփագճեան մահտեսի Խաչատուր աղա :
Գալփագճեան Ճանիկ աղա ժամագործ :
Դաւուտեան Ղազար աղա :
Գայսէրլեան Յարութիւն աղա :
Գասպարեան մահտեսի Գաբրիէլ աղա :
Գառնիկ աղա (մահտեսի) ոսկերիչ :
Գափամաճեան Գէորգ աղա. (2 օրի.) :
Գափամաճեան Մանուկ աղա :
Գափամաճեան Յարութիւն աղա :
Գափամաճեան Նազարէթ և Համբարձում աղայք (2 օր)
Գորոյեան մահտեսի Յակոբ աղա :
Գէլիկեան Գրիգոր և Յովհաննէս աղայք Կեսարացի :
Գուլուեան մահտեսի Յարութիւն աղա :
Գուշագլեան մահտեսի Յակոբ աղա :
Գրիգորեան Սիմոնիկ աղա :
Դպրատիրոց ընկերութիւն Էյիպու :
Եաղըճեան Յ. Ստեփան աղա Արապկիրցի :
Եաղըճեան Պօղոս աղա :
Եաղըճեան մահտեսի Յովհաննէս աղա :
Եարմաճեան Աւետիս աղա :
Եուսուֆեան Աղէքսան աղա :
Երամեան Գէորգ պէյ. (5 օրի.) :
Երէցեան Մինաս աղա :
Եօրտամեան Կարապետ աղա. (2 օրի.) :
Զաքարեան Գէորգ աղա :
Զաքարեան Կարապետ աղա :
Էլմասեան Պետրոս աղա :
Էմիրեան Նիկողոս աղա :
Թագւորեան մահտեսի Ռուբէն աղա :
Թագւորեան Վրթանէս աղա ժամագործ :
Թաշճի պաշի Յարութիւնեան Առաքել աղա :
Թիրաքեան Կարապետ աղա :
Թիրաքեան Ստեփան աղա. Առն. Խորէնեան Ընկ. :
Թօղաթլեան Մինաս էֆէնտի :
Թօխաթցի մահտեսի Յակոբ աղա :
Իփքապաշեան Աստուր աղա :
Լալաքէրեան Նազարէթ աղա :
Խաչատուրեան Մկրտիչ աղա :
Խուդաւերդեան Գէորգ աղա :
Կիւլպէնկ Աբէլ աղա :
Կիւլպէնկեան մահտեսի Կիւլպէնկ աղա :
Կիւլպէնկեան Կիւլպէնկ աղա Կեսարացի :
Կիւլպէնկեան Սերովբէ աղա :
Կիւմիւշեան Համբարձում աղա :
Կիւմիւշեան Յարութիւն աղա :
Կիւմիւշեան Յովհաննէս աղա :
Կիւմիւշճի մահտեսի Աբրահամ աղա :
Կիւմիւշճի Դանիէլ աղա :
Կիւմիւշճեան Գաբրիէլ աղա :
Համամճեան Գասպար աղա :
Համամճեան Սարգիս էֆէնտի :
Համբարձում աղա Սամաթիացի :
Հիւնքեար իսկելեսեան Սողոմոն էֆէնտի :
Հարենց մահտեսի Աբրահամ աղա :
Հնուտեանց Պետրոս աղա :
Ղազարոսեան մահտեսի Խաչիկ աղա :
Ղազարոսեան Քրիստոսատուր աղա :
Ճէնօղլեան մահտեսի Գաբրիէլ աղա ոսկերիչ :
Ճիվէլէկեան Ղազարոս աղա :
Ճիվէլէկեան Յովհաննէս աղա :
Մաղլըմեան Եփրեմ աղա :
Մաղմանեան մահտեսի Սարգիս Խալֆա :
Մահտեսի Պետրոս աղա փոխանորդ եկեղեցւոյ Ալթմաճըյ :
Մանիկեան մահտեսի Մանուկ աղա. (2 օրի) :
Մանուկեան Յակոբիկ աղա :
Մանուէլեան Պօղոս աղա :
Մանուկեան Յովհաննէս աղա :
Մանուկեան Սենեքերիմ աղա :
Մէրտանէքեան Մկրտիչ աղա :
Մըրըքեան մահտեսի Մկրտիչ աղա :
Մխիթարեան Միաբանութիւն :
Մինասեան Ճիլան աղա :
Միսաքեան Խաչատուր աղա :
Միսաքեան Վարդերես աղա :
Միքայէլեան Սամուէլ աղա :
Մովսէսեան Տօքթօր :
Մուրատխանեան Յակոբ էֆէնտի. (2 օրի.) :
Մօսիկեան Յակոբ աղա :
Մուրատեան Գէորգ աղա :
Մուրատեան մահտեսի Մարգար աղա :
Յակոբեան Պօղոս աղա սաաթճեար :
Յովհաննէսեան Հայրապետ աղա :
Յովսէփեան Կարապետ աղա :
Ներսէսեան Գրիգոր աղա :
Նիկողոսեան Պետրոս աղա :
Նորատունկեան մահտեսի Գրիգոր աղա. (2 օրի.) :
Նորատունկեան Յակոբիկ էֆէնտի. (2 օրի.) :
Նորատունկեան Սիմոնիկ աղա. (2 օրի.) :
Շահնուրեանց ընկերութիւն Սկիւտարու :
Շամամճեան Աւետիս աղա :
Ոսկանեան Մկրտիչ աղա սառաֆ :
Ոսկանեան Մարտիրոս աղա ժամագործ :
Չայեան մահտեսի Պաղտասար աղա Բեյքեանցի :
Չայըքեան Կարապետ աղա :
Չէլիկեան Գրիգոր և Յովհաննէս աղայք :
Չրաճեան Սարգիս աղա :
Չրաքեան Մելքոն աղա Արապկիրցի :
Չօլաքեան Մանուկ աղա :
Պալեան Սարգիս պէյ :
Պալեան Անտոնիկ էֆէնտի :
Պալեան Յակոբ էֆէնտի :
Պալըքճեան Առաքել աղա :
Պախալեան մահտեսի Խաչիկ աղա :
Պարտիզպանեան Աւետիս աղա :
Պարօնեան Նիկողոս աղա Սկիւտարցի :
Պէյլէրեան Խոսրով պէյ :
Պէյլէրեան Սահակ աղա :
Պէրպէրեան Սարգիս աղա :
Պէշիկեան Միքայէլ աղա :
Պօղոսեան մահտեսի Գէորգ աղա :
Պօղոսեան Յովհաննէս աղա :
Պօյաճեան Սիմոն աղա :
Սագըզեան Աղէքսան աղա :
Սահակեան մահտեսի Յարութիւն աղա :
Սարգիս (մահտեսի) աղա ոսկերիչ :
Սարրաֆեան Կարապետ աղա :
Սերովբէ (մահտեսի) աղա :
Սերովբէեան Երանեակ վարժուհի :
Սէրրէեան Յարութիւն աղա :
Սէրոբեան Տօքթօր էֆէնտի :
Սէյրէկպաշէ մահտեսի Սահակ աղա :
Սէփէրեան Նշան էֆէնտի :
Սիմոնեան Յակոբ աղա :
Սմբատեան Յարութիւն աղա :
Սուլթանեան Նիկողոս աղա :
Սուրէնեան Յովհաննէս էֆէնտի :
Ստամպօլեան Կարապետ և Բարսեղ աղայք :
Ստեփանեան մահտեսի Մկրտիչ աղա :
Վարդանեան Աբրահամ աղա :
Վարդանեանց Գրիգոր աղա Պօղոսեան :
Վարդանեան Շահէն աղա Թաշճիպաշի :
Վարժապետեան Դիգրան աղա :
Տամլաճեան Աբրահամ աղա :
Տատեան Յ. Առաքել Սիմակ էֆէնտի :

Տատեան Պ. Աւետիք էֆէնտի ։
Տատեան Պ. Մկրտիչ պէյ ։
Տատեան Յովհաննէս պէյ ։
Տատեան Յ. Ներսէս էֆէնտի ։
Տատեան Պ. Մագդաղինէ ։
Տատեան Պ. Նունէ օրիորդ ։
Տատեան Պ. Սիմոն պէյ ։
Տէր Յովհաննէսեան Ղազարոս աղա ։
Տէր Վրթանէսեան մահտեսի Գրիգոր աղա ։
Տրդատեան Յարութիւն աղա Կեսարացի ։
Տօնիկեան Գաղատացի Յակոբ աղա ։
Րէֆիքեան Մկրտիչ պէյ. (5 օրի.) ։
Րէսիմճի օղլի մահտեսի Մկրտիչ աղա ։
Փամուտեան Գէորգ աղա ։
Փափազեան Գէորգ Ամիրայ. (2 օրի.) ։
Փէշտըմալճեան մահտեսի Միքայէլ աղա ։
Փէշտըմալճեան մահտեսի Սահակ աղա ։
Քամպուրեան մահտեսի Անտոն աղա ամէլիճէ ։
Քարակէօզեան Միքայէլ աղա արմաշէ ։
Քացախեան Աւետիք աղա ։
Քէմահճեան Ոսկի էֆէնտի (2 օրի.) ։
Քէրէստէճեան Լեւոն աղա ։
Քէշիշեան Յովհաննէս աղա ։
Քէպապճեան Մարտիրոս աղա Սեբաստացի ։
Քիւմճեան Յարութիւն աղա ։
Օհանեան Յակոբ եւ Բարսեղ աղայք ։
Օհան աղա ։
Ֆէնէրճեան Յովակիմ աղա ։
Ֆէրուհ Բարունակ պէյ ։
Ֆընտըգլեան Յակոբ էֆէնտի ։

ՄԱԼՂԱՐԱ

Պիծակեան մահտեսի Յովհաննէս աղա ։

ՄԱՐԱՇ

Սուրբ Սարգիս եկեղեցւոյ վարժատան ։ Նուէր Մէծ. Յակոբեան Աղայէ որ յԱղէքսանդրիա ։
Ճանըրլեան մահտեսի Սարգիս աղա ։

ՄԱՐԶՈՒԱՆ

Գեր. Գէորգ Արքեպիսկոպոս ։

ՅՈՊՊԷ

Արժ. Աթանաս վարդապետ տեսուչ ։
Ս. Մուրատեան Միքօն աղա ։

ՆԻԿՈՄԻԴԻԱՅ

Թանգարան Վէրծ ուսուցման Նիկոմիդիոյ ։
Տէր Կարապետեան Մկրտիչ աղա ։
Տէր Մինասեան Եղիա աղա ։

ՈՒԼՆԻԱ (ԶԷՅԹՈՒՆ)

Սուրբ Յովհաննէս եկեղեցւոյ վարժատան ։ Նուէր Մէծ. Յակոբեան աղայէ որ յԱղէքսանդրիա ։
Սուրբ Յակոբ եկեղեցւոյ վարժատան ։ Նուէր Մէծ. մահտեսի Նազարէթ աղայէ Ս. Գափամաճեան ։
Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյ վարժատան ։ Նուէր Մէծ. մահտեսի Նազարէթ աղայէ Ս. Գափամա ։
Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ վարժատան ։
Սուրբ Սարգիս եկեղեցւոյ վարժատան ։

ՊԱՂՏԱՏ

Իսկէնտէրեան մահտեսի Խաչիկ աղայ ։
Իսկէնտէրեան մահտեսի Իսկէնտէր աղա ։

ՊԷՐՈՒԹ

Արժ. Գէորգ վարդապետ տեսուչ ։

ՍԵԲԱՍՏԻԱ

Գեր. Կարապետ Արքեպիսկոպոս ։
Արժ. Պետրոս վարդապետ ։
Ահարոն (մահտեսի) աղա ։
Աշըգաճեան Բարսեղ աղա ։
Տ. Թէոդորոսեանց մահտեսի Մարտիրոս աղա ։

ՍԻՒՐԷԿ

Արժ. Եփրեմ վարդապետ Եղեսիացի ։
Էսաղուպեան Սարգիս աղա ։
Իմէքեան Պետրոս աղա Մատէնցի ։
Ենիչէհրեան Մարգար աղա Ակնցի ։
Սանդըգ էֆէնտի Կիրակոս աղա ։

ՎԱՆ

Աւետիքեանց մահտեսի Մարտիրոսեան Մարգար աղա ։
Խաչատուրեանց մահտեսի Մկրտիչ աղա ։
Նաթանեան մահտեսի Հաճիապրահամ աղա ։
Պօղօսեանց Գէորգ աղա ։

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Գեր. Յակոբ Սրբազան Արքեպիսկոպոս ։
Տէր Մարտիրոս Քէշիշեանց ։
Աճէմեան Նաճառ մահտեսի Յովհաննէս աղա ։
Գույումճեան մահտեսի Եղիա աղա ։
Եէկէն Կարապետ աղա ։
Ջէրահ սագալեան Գրիգոր աղա ։
Ճանաքեան Աւետիք աղա ։
Մինասեան Յովհաննէս աղա ։
Նաճառեան Աւետիս աղա ։
Շիրինեան Պետրոս աղա ։
Չալըքճեան Գէորգ աղա ։
Ս. Երուսաղէմի մութէվէլլի Յակոբ աղա ։
Փափազեանց Յակոբ աղա ։

ՏՐԱՊԻԶՈՆ

Գեր. Մեսրոպ Արքեպիսկոպոս (2 օրի.) ։
Արժ. Գրիգորիս վարդապետ ։
Բարեհամբոյր Լ. դպրոցն ։
" Մեսրոպեան դպրոցն Կիւմիւշխանէի ։
" Դպրոցն Կիրասոնի ։
Գասպարեան Յակոբ աղա ։
Գըվըզըրեան Նիկողոս աղա ։
Խոպաչեան Վարդան աղա ։
Կիւլպէնկեան Կարապետ աղա ։
Կիւրճեան Պօղոս աղա ։
Մախոխեան Արիստակէս աղա ։
Մեղուորեան Սարգիս աղա ։
Մինասեան Յօհաննէս աղա ։
Յակոբեան մահտեսի Յարութիւն աղա ։
Ս. Մեղուորեան Խաչիկ աղա ։

ՓԱՐԻԶ

Թիւրայեան Պետրոս աղա ։
Յակոբեան Մարգար աղա ։

ՔԵՍԱՊ

Մանճիկեան Եսայի աղա ։
Մինասեան Յակոբ աղա ։
Տէր Մեսրոպ քահանայ Բերիացի ։

ՔԻԼԻՍ

Յակոբ աղա Ակնցի. (2 օրինակ) ։
Պուլղարեան Կարապետ աղա. (2 օրինակ) ։
Փամուքճեան Գէորգ աղա ։

ՑԱՆԿ

ՅՈՒՆԻՍ

Երկրորդ նամակ Գեր. Խաչակ Արք եպիսկոպոսի ի Ճիտաէէ 89

Զէյթունցի մանչուկի Յովակիմի քաջութիւնը . . . 90

Սուրբ Յակոբայ Առաքելական Աթոռոյն սեփականութեան խնդիրը հանդերձ գաղղիերէնով 93

Սաղմանք չափու 97

Ազգային երաժշտութիւն 98

ԿՐՕՆԱԿԱՆՔ. — Սամուէլ ռաբբի և իւր գիրքը (շարունակութիւն) 99

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ. — Հանդէս տարեդարձի գահակալութեան Սուլթան Ապտիւլ Մէճ. Կայսեր: — Անգլիական դպրոցի ատենագործութեան հանդէսը: — Խնկիլթէրրայի եկեղեցին եւ Հ. Ուիլէէմ Ուինսամ Սալէդ: — Դամասկոսի դպրոցի քննութեան հանդէսը . . 102

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾՔ 104

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

Ա. Սիոնը ամէն ամիս կը հրատարակուի մէկ 16 երեսի բաղկացեալ ութածալ թղթով.

Բ. Տարեկան գինն է երկու արծաթ մէճիտիէ, հանդերձ ճանապարհի ծախքովը, կանխիկ վճարելի:

Գ. Զատ տետրակ առնել ուզողը, պէտք է ամէն մէկ օրինակին երեք դահեկան վճարէ: